

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումն ու խարդախությունը կանխելու վերաբերյալ Համաձայնագիրը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Անձնական կիրառման ոլորտ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Ընդգրկվող հարկեր

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների, կամ տեղական իշխանությունների կողմից սահմանված եկամտից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի, կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած հավելանք, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարը, ինչպես նաև գույքի արժեքաճի հարկերը:

3. Համաձայնագիրը կիրառվում է, մասնավորապես, հետևյալ գործող հարկերի նկատմամբ.

- ա) Հայաստանի դեպքում՝
 - i) շահութահարկ,
 - ii) եկամտահարկ,
 - iii) գույքահարկ,
 - iv) հողի հարկ,
 (այսուհետ՝ հայկական հարկ).
- բ) Ֆրանսիայի դեպքում՝

- i) եկամտահարկ ("l'impôt sur le revenu"),
 - ii) ընկերություններից գանձվող հարկ ("l'impôt sur les sociétés"),
 - iii) աշխատավարձից գանձվող հարկ ("la taxe sur les salaires"),
 - iv) հարստության հարկ ("l'impôt de solidarité sur la fortune"),
- ներառյալ ցանկացած պահում աղբյուրի մոտ, ցանկացած նախավճար կամ կանխավճար վերոհիշյալ հարկերի առնչությամբ,
(այսուհետ՝ ֆրանսիական հարկ) :

4. Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն Համաձայնագրի ստորագրումից հետո ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամանակին կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված էական փոփոխությունների մասին:

Հոդված 3 **Ընդհանուր սահմանումներ**

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե կոնտեքստը այլ մեկնաբանում չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» արտահայտությունները նշանակում են, ենթատեքստից ելնելով, Հայաստան կամ Ֆրանսիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է տարածք, ներառյալ ներքին ջրերը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ինքնիշխան իր իրավունքներն և իր իրավասությունը՝ համաձայն իր օրենսդրությանը և միջազգային իրավունքին,

գ) «Ֆրանսիա» տերմինը նշանակում է Ֆրանսիայի Հանրապետության եվրոպական և անդրծովյան դեպարտամենտներ, ներառյալ տարածքային ծովը, և այդ տարածքային ծովից դուրս ցանկացած գոտի, որի նկատմամբ, ըստ միջազգային իրավունքի, Ֆրանսիայի Հանրապետությունը ինքնիշխան իրավունքներ ունի ծովային հատակի և նրա ստորին շերտի բնական պաշարների և այնտեղից բխող ջրերի հետախուզման և շահագործման նպատակով,

դ) «վարչատարածքային ստորաբաժանումներ» արտահայտությունը նշանակում է Հայաստանի վարչատարածքային ստորաբաժանումներ,

ե) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

զ) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» արտահայտությունները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից շահագործվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից շահագործվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ, երբ նավը, օդանավը, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցը շահագործվում է միայն մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

թ) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը կամ նրա լիազորած ներկայացուցիչը,

ii) Ֆրանսիայի դեպքում՝ բյուջեի գծով նախարարը կամ նրա լիազորված ներկայացուցիչը,

ժ) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա ստեղծված ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ այլ կազմակերպություն:

2. Պայմանավորվող պետության կողմից Համաձայնագիրը կիրառելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին կամ արտահայտություն ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենքով այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը: Այդ Պետության հարկային օրենքով տերմինի կամ արտահայտության սահմանված նշանակությունը գերիշխում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինի կամ արտահայտության համար սահմանված նշանակության նկատմամբ:

Հոդված 4 Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այդ Պետությունում ենթակա է հարկման՝ իր բնակության վայրի, ռեզիդենտության, գրանցման վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա: Սակայն, այդ արտահայտությունը չի ներառում անձանց, որոնք այդ Պետությունում ենթակա են հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) այդ անձը համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի մշտական կացարան. եթե նա երկու Պետություններում էլ ունի իր մշտական կացարանը, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ այդ անձը ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե այդ անձը երկու Պետություններում էլ սովորաբար բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի քաղաքացիությունը ունի,

դ) եթե այդ անձը ունի երկու Պետությունների քաղաքացիություն կամ նրանցից և ոչ մեկի քաղաքացիություն չունի, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների համաձայն ֆիզիկական անձ չհանդիսացող անձը որպես այդպիսին գրանցված է երկու Պայմանավորվող պետություններում, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է իր գործնական ղեկավարման վայրը: Այդ անձի գործնական ղեկավարման վայրի գտնվելու վերաբերյալ կասկածանքի առկայության դեպքում իրավասու մարմինները կձգտեն համաձայնության գալ այդ վայրի վերաբերյալ: Սակայն, եթե վերջիններս համաձայնության չեն գալիս, այդ անձը Համաձայնագրի դրույթների կիրառման նպատակով երկու Պետություններից և ոչ մեկի ռեզիդենտ չի հանդիսանա:

4. «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը ներառում է այդ Պետությունը, նրա վարչատարածքային ստորաբաժանումներն ու տեղական իշխանությունները և նրանց հանրային իրավունքի իրավաբանական անձինք:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» արտահայտությունը նշանակում է գործնական կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» արտահայտությունը, մասնավորապես, ներառում է.

ա) ղեկավարման վայր,

- բ) մասնաճյուղ,
- գ) գրասենյակ,
- դ) գործարան,
- ե) արտադրամաս, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական կամ մոնտաժային հրապարակը կազմում է մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ նրա տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» չի կազմում, եթե.

ա) կառույցները օգտագործվում են ձեռնարկությանը պատկանող ապրանքների բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքները կուտակվում են բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքները կուտակվում են բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրը օգտագործվում է ձեռնարկության համար բացառապես ապրանքների գնման կամ տեղեկության հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրը օգտագործվում է ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

զ) գործունեության կայուն վայրը օգտագործվում է բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում առաջացող գործունեության կայուն վայրի համընդհանուր գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, որի մասին խոսվում է 6-րդ կետում, և գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է տվյալ ձեռնարկության համար, եթե միայն այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որն եթե նույնիսկ և իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, ապա այդ կետի դրույթների համաձայն այդ գործունեության կայուն վայրը չի վերաժում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, ընդհանուր

կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակով ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին չի վերածում այդ ընկերություններից մեկին մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6 **Եկամուտներ անշարժ գույքից**

1. Անշարժ գույքից առաջացած եկամուտները (ներառյալ եկամուտ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից) կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդպիսի անշարժ գույքը:

2. Սույն Համաձայնագրի նպատակների համար «անշարժ գույք» արտահայտությունը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ արտահայտությունը, բոլոր դեպքերում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող մասնավոր օրենքի դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների մշակման կամ մշակման իրավունքի համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը, օդանավերը, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի շահագործումից, վարձով տալուց, վարձակալությունից կամ ցանկացած այլ ձևով շահագործելուց ստացած եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ, ինչպես նաև անկախ մասնագիտությունների իրագործման նպատակով օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ:

5. Այն դեպքում, երբ ընկերության բաժնետոմսերի, փայաբաժինների կամ այլ իրավունքների տիրապետումը իրավունք է տալիս այդպիսի բաժնետոմսերի կամ ընկերության իրավունքների տիրոջը՝ օգտվելու ընկերության կողմից տնօրինվող անշարժ գույքից, ապա այդպիսի օգտվելու իրավունքի անմիջական օգտագործումից, վարձով տալուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց առաջացած եկամուտները ենթակա են հարկման

այն Պայմանավորվող պետությունում, որի տարածքում գտնվում է այդ անշարժ գույքը:

Հոդված 7 **Ձեռնարկությունների շահույթը**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը չի իրականացնում իր գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իրականացնում է իր գործունեությունը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Ելնելով 3-րդ կետի դրույթներից, այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը իրականացնում է իր գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը կվերագրվի այն շահույթը, որը նա կարող էր ունենալ, եթե ստեղծեր նույն կամ համանման պայմաններում նույն կամ համանման գործունեությամբ զբաղվող առանձին ձեռնարկություն և գործեր միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, որոնք կատարված են թե՛ այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե՛ այլուր: Սակայն այդպիսի հանում չի թույլատրվի այն գումարների նկատմամբ, եթե այդպիսիները կան, և որոնք վճարված կլինեին (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) մշտական հաստատության կողմից ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա գրասենյակներից որևէ մեկին պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ համանման վճարումների տեսքով, կամ մատուցած որոշակի ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, մշտական հաստատությանը տրամադրած փոխառության դիմաց տոկոսների տեսքով: Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի գումարներ (այլ, քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում), որոնք մշտական հաստատության կողմից վճարվում են ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներից որևէ մեկին պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ համանման վճարումների տեսքով, կամ մատուցած որոշակի ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի

տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներից որևէ մեկին տրամադրած փոխառության դիմաց տոկոսների տեսքով:

4. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվի մշտական հաստատությանը ձեռնարկության համար միմիայն ապրանքների գնման հիման վրա:

5. Սույն հոդվածի նախորդ կետերի նպատակների համար, մշտական հաստատությանը հաշվեգրվող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար հիմնավոր ու բավարար պատճառ չառաջանա:

6. Եթե Պայմանավորվող պետությունում մշտական հաստատությանը հաշվեգրվող շահույթի որոշումը ձեռնարկության իր տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համամասնական բաշխման հիման վրա հանդիսանում է սովորական երևույթ, ապա 2-րդ կետի ոչ մի դրույթ չի խոչընդոտի Պայմանավորվող պետությանը հարկման ենթակա շահույթը որոշել կիրառվող բաշխման միջոցով. բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում նշված սկզբունքներին:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8 **Միջազգային փոխադրում**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից առաջացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում: Այդ շահույթը ներառում է շահույթ, որը այդ ձեռնարկությունը ստանում է այլ գործունեությունից, և, մասնավորապես, միջազգային փոխադրումներում ապրանքների կամ արտադրանքի փոխադրման համար օգտագործվող բեռնարկերի օգտագործումից, պահումից կամ վարձով տալուց, պայմանով, որ այդ գործունեությունը լրացուցիչ է միջազգային փոխադրումներում ձեռնարկության կողմից նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը:

2. Եթե ծովային նավագնացության ձեռնարկության գործնական ղեկավարման վայրը տեղակայված է նավի վրա, ապա համարվում է, որ այդ վայրը գտնվում է այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է նավի գրանցման նավահանգիստը, իսկ գրանցման նավահանգստի բացակայության դեպքում այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է նավը շահագործողը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում (պուլում), համատեղ շահագործման մեջ կամ միջազգային

շահագործող գործակալությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ, բայց միայն շահույթի այն մասի նկատմամբ, որը ստացվել է այդ միավորմանը մասնակցելուց:

Հոդված 9 **Չուգորդված (ասոցացված) ձեռնարկություններ**

1. Այն դեպքում, երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև՝ նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում, ստեղծվում կամ նշանակվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա շահույթը, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին այդ պայմանների բացակայության դեպքում, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում է, և համապատասխանաբար հարկում, շահույթ, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում արդեն իսկ ենթարկվել է հարկման, և այդ ներառած շահույթն այն շահույթն է, որն հաշվեգրված կլիներ առաջին հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդպիսի ճշգրտումը կդիտարկի արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի այլ դրույթները, և, անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10 Շահաբաժիններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները ենթակա են հարկման այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները ենթակա են հարկման նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը, և այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով սահմանված հարկը չի կարող գերազանցել.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր է հանդիսանում ընկերությունը, որը ուղղակի կամ անուղղակի ձևով տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 10 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժին» տերմինը նշանակում է եկամուտ բաժնետոմսերից, օգտագործման բաժնետոմսերից կամ իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ, պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող իրավունքներից, ինչպես նաև Հայաստանի առնչությամբ՝ եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես որ բաժնետոմսերից առաջացած եկամուտը, և Ֆրանսիայի առնչությամբ՝ եկամուտ, որը հարկային օրենքի համաձայն դիտարկվում է որպես բաշխում: Պայմանավորված է, որ «շահաբաժին» տերմինը չի ներառում 16-րդ հոդվածում նշված եկամուտները:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, արդյունաբերական կամ առևտրային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ մասնագիտություն է իրականացնում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է նրանց հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող

ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ սահմանել որևէ հարկ, բացառությամբ դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ, և համապատասխան հարկատեսակով հարկման չենթարկել ընկերության չբաշխված շահույթը, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

6. Չնայած 5-րդ կետի և 24-րդ հոդվածի դրույթներին, այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը արդյունաբերական կամ առևտրային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա ընկերության հարկի վճարումից հետո այդ մշտական հաստատության շահույթը այդ մյուս Պետության օրենսդրությանը համաձայն կարող է ենթակա լինել հարկման 5 տոկոսը չզերազանցող դրույթաչափով:

Հոդված 11 **Տոկոսներ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները ենթակա են հարկման այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները ենթակա են հարկման նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, և այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե տոկոսներ ստացող անձը փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով սահմանված հարկը չի կարող զերազանցել տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված տոկոսները ենթակա են հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում տոկոսներ ստացող անձը, եթե այդ անձը դրանց փաստացի սեփականատերն է, և եթե կատարվում է հետևյալ պայմաններից մեկը.

ա) այդ անձը Պայմանավորվող պետություններից, նրա վարչատարածքային ստորաբաժանումներից կամ տեղական իշխանություններից մեկն է, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձն է, ներառյալ այդ Պետության կենտրոնական բանկը. կամ այդ տոկոսները վճարվում են Պետություններից մեկի, նրա վարչատարածքային ստորաբաժանումների, տեղական իշխանությունների կամ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից,

բ) այդ տոկոսները վճարվում են ցանկացած պարտապահանջի կամ փոխառության նկատմամբ, որն երաշխավորված, ապահովագրված կամ

օժանդակված է Պայմանավորվող պետության կողմից կամ այդ Պայմանավորվող պետության անունից գործող որևէ այլ անձի կողմից,

գ) այդ տոկոսները վճարվում են արդյունաբերական, առևտրական կամ գիտական սարքավորումների ապառիկ վաճառքից կամ արտադրանքի ապառիկ վաճառքից, կամ մի ձեռնարկության կողմից մյուս ձեռնարկությանը որևէ ծառայությունների մատուցման դիմաց, կամ

դ) այդ տոկոսները վճարվում են բանկի կողմից շնորհված ցանկացած տեսակի փոխառության դիմաց:

4. «Տոկոսներ» տերմինը նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոտեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ պետական միջոցներից և փոխառության պարտատոմսերից, ներառյալ դրանց հետ կապված պարզևավճարներն ու մրցանակները: Սույն հոդվածի նպատակի համար ժամկետանց վճարման դիմաց զանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվում: «Տոկոսներ» տերմինը չի ներառում եկամտի տարրեր, որոնք, համաձայն 10-րդ հոդվածի դրույթների, դիտարկվում են որպես շահաբաժին:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, արդյունաբերական կամ առևտրային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ մասնագիտություն է իրականացնում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և եթե տոկոսներ առաջացնող պարտապահանջը գործնականորեն կապված է նրանց հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե պարտապանը այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսների պարտապանը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն կամ կայուն բազա ունի, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, և որի տոկոսները վճարվում են, ու որոնք կրում են այդպիսի տոկոսների ծախսերը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

7. Այն դեպքում, երբ պարտապանի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանցից որևէ մեկի և երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր պարտապանի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջին գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա Պայմանավորվող պետություններից

յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան և հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 12 **Ռոյալթի**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթին ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին ենթակա է հարկման նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ռոյալթի ստացող անձը փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով սահմանված հարկը չի կարող գերազանցել.

ա) ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը, վճարված որևէ հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար,

բ) ռոյալթիի համախառն գումարի 10 տոկոսը՝ բոլոր մնացած դեպքերում:

3. «Ռոյալթի» տերմինը նշանակում է ցանկացած տեսակի վճարում գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործության, ներառյալ կինոնկարները (կամ ռադիոհաղորդումների կամ հեռուստատեսության հաղորդումների հեռարձակման համար ֆիլմերը կամ ձայնագրությունները), ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկատվության (նոու-հաու) համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, արդյունաբերական կամ առևտրային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ մասնագիտություն է իրականացնում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և եթե ռոյալթին առաջացնող իրավունքը կամ գույքը գործնականորեն կապված է նրանց հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե պարտապանը այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն այն դեպքում, երբ ռոյալթիի պարտապանը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, մշտական հաստատություն կամ կայուն բազա ունի Պայմանավորվող պետությունում, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և որոնք

կրում են այդպիսի ռոյալթիի ծախսերը, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Այն դեպքում, երբ պարտապանի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանցից որևէ մեկի և երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով ծառայությունների համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր պարտապանի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջին գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան և հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելվածը

1. ա) 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելվածը ենթակա է հարկման այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ անշարժ գույքը:

բ) Ընկերության բաժնետոմսերի, փայաբաժինների կամ այլ իրավունքների օտարումից ստացած արժեքի հավելվածը, որի ակտիվները կամ գույքը գլխավորապես կազմված են (ուղղակի կամ անուղղակի՝ մեկ կամ մի քանի այլ ընկերությունների միջնորդությամբ) 6-րդ հոդվածում նշված և Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից կամ այդ գույքին վերաբերող իրավունքներից, ենթակա է հարկման այդ Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատությանը պատկանող գույքի մաս կազմող շարժական գույքի, կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ մասնագիտություն իրականացնելու նպատակով ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը, ներառյալ այդ մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդ կայուն բազայի օտարումից առաջացած այդ արժեքի հավելվածը, ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող գույքի մաս կազմող գույքի, որը կազմված է նավերից, օդանավերից, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներից, որոնք շահագործվում են այդ ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում, կամ այդ նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական

գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանքը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքից տարբեր գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է օտարողը:

Հոդված 14

Անկախ մասնագիտություններ

1. Ազատ մասնագիտությունից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդ ռեզիդենտը իր գործունեությունը իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող պետությունում կանոնավոր ձևով չունի կայուն բազա: Եթե նա ունի այդ կայուն բազան, այդ եկամուտը ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում, բայց միայն այդ կայուն բազային վերագրելի չափով:

2. «Ազատ մասնագիտություն» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական բնույթի գործունեություն, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեություն:

Հոդված 15

Կախյալ մասնագիտություններ

1. Ելնելով 16-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքից ստացած աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այնտեղ, ապա այդ ձևով ստացված վարձատրությունը ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքից ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջին Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում՝ ցանկացած հաջորդական 12-ամսյա ժամկետում, որը սկսվում կամ ավարտվում է դիտարկվող ֆինանսական տարում, և

բ) վարձատրությունը կատարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Ելնելով 19-րդ և 20-րդ հոդվածների դրույթներից, և չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, դասավանդողը կամ հետազոտողը, որը հանդիսանում է կամ մինչև անմիջապես Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջին Պետությունում բացառապես դասավանդման կամ հետազոտումը կատարելու նպատակով, ենթակա է հարկման միայն մյուս Պետությունում՝ այդ գործունեությունից ստացված վարձատրությունների նկատմամբ: Սույն դրույթը կիրառվում է դասավանդման կամ հետազոտման կատարման նպատակով՝ դասավանդողի կամ հետազոտողի առաջին Պետություն առաջին անգամ ժամանելու ամսաթվից 24 ամիսը չգերազանցող ժամկետի համար: Սույն դրույթը չի կիրառվում դասավանդումից կամ հետազոտությունից առաջացած եկամտի նկատմամբ, եթե այդ աշխատանքները կատարվում են ելնելով ոչ թե հասարակական շահերից, այլ գլխավորապես մեկ կամ ավելի որոշակի անձանց մասնավոր շահից:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավում, օդանավում, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներում իրականացվող վարձու աշխատանքի նկատմամբ ստացված վարձատրությունը ենթակա է հարկման այդ Պետությունում:

Հոդված 16

Տնօրենների հոնորարներ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության վարչական կամ հսկող խորհրդի կամ այլ համանման մարմնի անդամի, ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

Հոդված 17

Արվեստի աշխատողներ և մարզիկներ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող պետությունում ստացած եկամուտը, որպես արվեստի աշխատող, ինչպես որ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը, կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր՝ որպես այդպիսին իրականացվող անձնական գործունեությունից, ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի աշխատողի կամ մարզիկի իր՝ որպես այդպիսին իրականացվող անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ

մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա չնայած սույն Համաձայնագրի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ այդ եկամուտը ենթակա է հարկման այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը՝ որպես արվեստի աշխատող կամ մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իր՝ որպես այդպիսին իրականացվող անձնական գործունեությունից, ենթակա է հարկման միայն առաջին Պետությունում, եթե այդ գործունեությունը մյուս Պետությունում հիմնականում ֆինանսավորվում է առաջին Պետության հասարակական հիմնադրամների, նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանց հանրային իրավունքի իրավաբանական անձանց միջոցներից:

4. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող արվեստի աշխատողի կամ մարզիկի իր՝ որպես այդպիսին մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Համաձայնագրի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, ենթակա է հարկման միայն առաջին Պետությունում, եթե այդ ուրիշ անձը հիմնականում ֆինանսավորվում է այդ առաջին Պետության հասարակական հիմնադրամների, նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանց հանրային իրավունքի իրավաբանական անձանց միջոցներից:

Հոդված 18 Կենսաթոշակներ

Ելնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 19 Պետական վարձատրություններ

1. ա) Կենսաթոշակից տարբեր վարձատրությունները, վճարված Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը, ստորաբաժանումներին, իշխանությանը կամ

անձանց մատուցած ծառայությունների առնչությամբ, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտը և ունի նրա քաղաքացիությունը՝ միևնույն ժամանակ չունենալով առաջին Պետության քաղաքացիություն:

2. ա) Կենսաթոշակը, որը Պայմանավորվող պետության, կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից ուղղակի ձևով, կամ նրանց կողմից ստեղծած հիմնադրամներից վճարված է ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը, ստորաբաժանմանը, իշխանությանը կամ իրավաբանական անձին մատուցած ծառայությունների առնչությամբ, ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդ կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն և ունի նրա քաղաքացիությունը՝ միևնույն ժամանակ չունենալով առաջին Պետության քաղաքացիությունը:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների, կամ տեղական իշխանությունների, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրականացվող արդյունաբերական կամ առևտրային գործունեության առնչությամբ մատուցած ծառայությունների վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20 **Ուսանողներ**

Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ մինչև Պայմանավորվող պետություն անմիջապես ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջին Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չէ հարկման այդ Պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումների նկատմամբ՝ պայմանով, որ այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21

Այլ եկամուտներ

1. Սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տարրերը, եթե նա դրանց փաստացի սեփականատերն է, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի ռեզիդենտը ենթակա է հարկման այդ Պետությունում այդ եկամտի տարրերի նկատմամբ: Եթե այդ պայմանը չի կատարվում, եկամտի այդ տարրերը կմնան հարկման ենթակա մյուս Պայմանավորվող պետությունում՝ նրա օրենսդրությանը համապատասխան:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբեր այլ եկամտի նկատմամբ, եթե այդ եկամտի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող պետությունում արդյունաբերական և առևտրային գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ մասնագիտություն է իրականացնում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և եկամուտն առաջացնող իրավունքը կամ գույքը գործնականորեն կապված է դրանց հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 22

Գույք

1. ա) Գույքը, բաղկացած 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքից, ենթակա է հարկման այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ անշարժ գույքը:

բ) Գույքը, բաղկացած ընկերության բաժնետոմսերից, փայաբաժիններից կամ այլ իրավունքներից, որի ակտիվները կամ գույքը գլխավորապես կազմված են (ուղղակի կամ անուղղակի՝ մեկ կամ մի քանի այլ ընկերությունների միջնորդությամբ) Պայմանավորվող պետությունում գտնվող և 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքից, կամ այդ գույքի նկատմամբ իրավունքներից, ենթակա է հարկման այդ Պետությունում:

2. Գույքը, բաղկացած 1-ին կետի «բ» ենթակետում չնշված բաժնետոմսերից, փայաբաժիններից կամ այլ իրավունքներից, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության մասնակցության էական մասն է կազմում, ենթակա է հարկման այդ Պետությունում: Մասնակցության էական մասը առկա է համարվում այն դեպքում, երբ անձը, ինքնուրույն կամ ազգակցված անձերի հետ միասին, անմիջապես օտարմանը նախորդող հինգ տարվա ընթացքում՝ ցանկացած պահին, ուղղակի կամ անուղղակի ձևով տիրում է բաժնետոմսերին,

փայաբաժիններին կամ այլ իրավունքներին, որոնց ընդհանուր արժեքը ընկերության շահույթի առնվազն 25 տոկոսի իրավունք է տալիս:

3. Գույքը, բաղկացած Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ակտիվների մաս կազմող շարժական գույքից կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ մասնագիտության իրականացման նպատակով ունեցած կայուն բազային պատկանող շարժական գույքից, ենթակա է հարկման այդ մյուս Պետությունում:

4. Գույքը, բաղկացած Պայմանավորվող պետության ձեռնարկության ակտիվների մաս կազմող գույքից, և կազմված միջազգային փոխադրումներում նրա կողմից շահագործվող նավերից, օդանավերից, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներից կամ այդ նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործման համար նախատեսված շարժական գույքից, ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 23

Կրկնակի հարկման բացառումը

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) Այն դեպքում, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք ունի, որոնք սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան ենթակա են հարկման Ֆրանսիայում, ապա Հայաստանը թույլ կտա.

i) հանել այդ ռեզիդենտի եկամտահարկից Ֆրանսիայում վճարված եկամտահարկին հավասար գումարը,

ii) հանել այդ ռեզիդենտի գույքահարկից Ֆրանսիայում վճարված գույքահարկին հավասար գումարը:

Սակայն այդ հանումը յուրաքանչյուր դեպքում չի գերազանցի մինչև հանման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրելի է եկամտին կամ գույքին, որոնք ենթակա են հարկման Ֆրանսիայում:

բ) Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ ունեցած գույքը ազատված է հարկումից Հայաստանում, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

2. Ֆրանսիայի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) չնայած սույն Համաձայնագրի որևէ այլ դրույթի՝ եկամուտները, որոնք Համաձայնագրի դրույթների համաձայն ենթակա են հարկման միայն Հայաստանում, և որոնք Ֆրանսիայի ռեզիդենտի եկանուտներն են, հաշվի կառնվի ֆրանսիական հարկի հաշվարկման համար, երբ այդ եկամուտները, համաձայն ֆրանսիական ներքին օրենսդրության, ընկերությունների հարկից չեն ազատված: Այդ դեպքում հայկական հարկը այդպիսի եկամտից հանման ենթակա չէ, բայց Ֆրանսիայի ռեզիդենտը իրավունք ունի հարկի հաշվանցմանը ֆրանսիական հարկի դիմաց, վերապահելով i և ii ենթակետերով նախատեսված պայմաններն ու սահմանափակումները: Այդ հարկային հաշվանցումը հավասար է.

i) ii ենթակետում չնշված եկամտի համար, ֆրանսիական հարկի գումարին, որը վերագրելի է այդպիսի եկամտին, պայմանով, որ փաստացի սեփականատերը այդ եկամտի նկատմամբ ենթակա է հարկման հայկական հարկով,

ii) 7-րդ հոդվածում և 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ֆրանսիական ընկերությունների հարկին ենթակա եկամտի առնչությամբ և 10-րդ հոդվածում, 13-րդ հոդվածի 1-ին կետում, 15-րդ հոդվածի 4-րդ կետում, 16-րդ հոդվածում և 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված եկամտի առնչությամբ Հայաստանում վճարված հարկի գումարին, այդ հոդվածների դրույթներին համապատասխան. սակայն այդ հարկային հաշվանցումը չպետք է գերազանցի այդ եկամտին համապատասխանող ֆրանսիական հարկի գումարը:

բ) 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ կետերի դրույթների համաձայն Հայաստանում հարկման ենթակա գույք ունեցող Ֆրանսիայի ռեզիդենտը այդ գույքի նկատմամբ ենթակա է հարկման նաև Ֆրանսիայում: Ֆրանսիական հարկը հաշվարկվում է այդ գույքի համար Հայաստանում վճարված հարկի գումարին հավասար հարկային հաշվանցում անելով: Սակայն այդ հարկային հաշվանցումը չպետք է գերազանցի այդ գույքին համապատասխանող ֆրանսիական հարկի գումարը:

գ) i) Պայմանավորված է, որ «այդ եկամտին համապատասխանող Ֆրանսիական հարկի գումար» արտահայտությունը «ա» ենթակետում օգտագործելիս նշանակում է.

- այն դեպքում, երբ այդ եկամտի հարկը հաշվարկվում է համամասնական դրույք կիրառելիս, դիտարկվող մաքուր եկամտի գումարի և դրա նկատմամբ գործնականում կիրառվող դրույքի արտադրյալը,

- այն դեպքում, երբ այդ եկամտի հարկը հաշվարկվում է պրոգրեսիվ սանդղակ կիրառելիս՝ դիտարկվող մաքուր եկամտի գումարի բազմապատկած դրույքով, որը ֆրանսիական օրենքի համաձայն ենթակա է հարկման, ընդհանուր մաքուր եկամտի նկատմամբ փաստացի վճարման ենթակա հարկի և ընդհանուր մաքուր եկամտի գումարի քանորդն է և ֆրանսիական օրենքի համաձայն հարկվող ընդհանուր մաքուր եկամտի նկատմամբ գործնականում

կիրառվող հարկի և ընդհանուր մաքուր եկամտի գումարի քանորդը հանդիսացող դրույքի արտադրյալը:

Սույն մեկնաբանությունը համանմանորեն կկիրառվի «բ» ենթակետում օգտագործված «այդպիսի գույքին հաշվեգրվելիք ֆրանսիական հարկի գումար» արտահայտության նկատմամբ:

ii) Պայմանավորված է, որ «Հայաստանում վճարված հարկի գումար» արտահայտությունը «ա» և «գ» ենթակետերում օգտագործելիս նշանակում է հայկական հարկի գումար, գործնականորեն վճարված այնտեղ՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան, վերջնականորեն դիտարկող եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ Ֆրանսիայի ռեզիդենտ հանդիսացող այդ եկամտի կամ գույքի տարրերի փաստացի սեփականատիրոջ կողմից:

Հոդված 24 **Անխտրականություն**

1. ա) Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք, մասնավորապես, ռեզիդենտության նկատմամբ, միևնույն հանգամանքների դեպքում: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ:

բ) «ա» ենթակետի նպատակների համար պայմանավորված է, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ընկերակցությունը կամ ասոցիացիան չեն դրված նույն պայմաններում, ինչ որ այդ Պետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ընկերակցությունը կամ ասոցիացիան. ինչը կկիրառվի անկախ ազգության սահմանումից, եթե անգամ իրավաբանական անձինք, ընկերակցությունները կամ ասոցիացիաները համարվեն այն Պայմանավորվող պետության ազգային անձինք, որի ռեզիդենտներն են հանդիսանում:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիություն չունեցող անձինք չեն ենթարկվի Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու ստանձնած պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել դիտվող Պետության ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան

այդ մյուս Պետության համանման գործունեություն վարող ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող Պայմանավորվող պետությանը՝ շնորհել մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին, հարկման նպատակների համար, այնպիսի անձնական զեղչեր, ազատումներ և պակասեցումներ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների պատճառով, որոնք նա շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթիները և այլ վարձատրությունները այդ ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման նույն պայմաններով, ինչպես որ առաջին Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, ենթակա են հանման նույն պայմաններով, ինչ որ առաջին Պետության ռեզիդենտին պարտավորեցնելիս:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակի կամ անուղղակի ձևով կառավարվում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չեն ենթարկվի առաջին Պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումը կամ ստանձնած պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթակվել առաջին Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող կամ այդ Պետությունում ժամանակավորապես գտնվող որևէ ֆիզիկական անձի կողմից կամ նրա համար մյուս Պայմանավորվող պետությունում հարկային նպատակների համար ընդունված և հաստատված որևէ կենսաթոշակային կազմակերպությանը կատարված մուծումները կարող են ունենալ հարկային առավելություններ առաջին Պետությունում՝ պայմանով, որ այդ կենսաթոշակային ռեժիմը առաջին Պետության իրավասու մարմնի կողմից համապատասխանեցված կլինի այդ Պետությունում գոյություն ունեցող և հարկային նպատակների համար ճանաչված կենսաթոշակային ռեժիմին: Այս դեպքում շնորհված հարկային արտոնությունը այն է, որը կկիրառվեր, եթե կենսաթոշակային ռեժիմը այդ Պետությունում հարկային նպատակների համար ընդունված և ճանաչված լիներ:

7. Պայմանավորվող պետության հարկային օրենքներով այդ Պետության, կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձանց համար նախատեսված ազատումները կամ այլ առավելությունները, ոչ արդյունաբերական և առևտրային բնույթի

գործունեություն իրականացնելու դեպքում, համապատասխանորեն նույն պայմաններով կկիրառվեն մյուս Պայմանավորվող պետության, կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների, կամ նրանցից որևէ մեկի հանրային իրավունքի իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք իրականացնում են նույն կամ համանման գործունեություն: Չնայած 8-րդ կետի դրույթներին՝ սույն կետի դրույթները չեն կիրառվում մատուցված ծառայություններից առաջացած հարկերի և տուրքերի նկատմամբ:

8. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

9. Եթե Պայմանավորվող պետությունների միջև սույն Համաձայնագրից տարբեր որևէ միջազգային համաձայնագիր, պայմանագիր կամ կոնվենցիա, որի կողմերն են հանդիսանում Պայմանավորվող պետությունները, ներառում է որևէ անխտրականության դրույթ կամ որևէ ազգի առավելապես բարենպաստ դրույթ, որոշված է, որ հարկային հարցերում այդպիսի դրույթները չեն կիրառվի:

Հոդված 25

Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդ գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Իրավասու մարմինը կձգտի, եթե բողոքը համարի արդարացի, և եթե ինքը ի վիճակի չի լինի հանգելու գոհացուցիչ լուծման, գործը վճռել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Համաձայնությունը պետք է կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված ցանկացած սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կձգտեն լուծել Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ առաջացած ցանկացած դժվարություն կամ

կասկած: Նրանք կարող են նաև, Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, համախորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կամ նրանց ներկայացուցիչները կարող են ուղղակի հաղորդակցվել միմյանց հետ սույն հոդվածի նախորդ կետերի վերաբերյալ համաձայնության հասնելու նպատակով: Երբ համաձայնության գալու համար կարծիքների բանավոր փոխանակումը կգտնվի նպատակահարմար, այդպիսի փոխանակումը կարող է տեղի ունենալ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններից կամ նրանց ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով:

5. Չնայած ցանկացած այլ պայմանագրի, համաձայնագրի կամ կոնվենցիայի, որի կողմերն են հանդիսանում Պայմանավորվող պետությունները, Պայմանավորվող պետությունների միջև հարկային հարցերը (ներառյալ սույն Համաձայնագրի կիրառմանը վերաբերող բանավեճերը) կլուծվեն միայն սույն հոդվածի դրույթներով, եթե իրավասու մարմինները այլ ձևով համաձայնության չգան:

Հոդված 26 **Տեղեկությունների փոխանակում**

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկություն կփոխանակեն Համաձայնագրում ընգրկված հարկերի վերաբերյալ այնքանով, որքանով դրանցից առաջացող հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին: Տեղեկության փոխանակումը 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության կողմից ստացած ցանկացած տեղեկություն գաղտնի է համարվում այնպես, ինչպես որ այդ Պետության ներքին օրենսդրության շրջանակում ստացած տեղեկությունը և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք զբաղված են Համաձայնագրում ընդգրկված հարկերը գնահատելով կամ գանձելով, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձումով կամ դատական հետապնդումով, կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկումով: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդ նպատակներով: Նրանք կարող են հրապարակայնորեն հաղորդել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատարանի որոշումներ ընդունելիս:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) անցկացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական գործավարության միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրային, արդյունաբերական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է հասարակական կարգին:

Հոդված 27

Աջակցություն գանձման գործում

1. Պայմանավորվող պետության իրավասու մարմնի (հետագայում հիշատակվող որպես Հայցատեր պետություն) հայցով մյուս Պայմանավորվող պետությունը (այսուհետ՝ Հայցվող պետություն), հաշվի առնելով 7-րդ, 9-րդ և 10-րդ կետերի դրույթները, դիմում է անհրաժեշտ քայլերի առաջին Պետության հարկային պարտքերի գանձմանը այնպես, ինչպես որ կվարվեր իր սեփական հարկային պարտքերի դեպքում: Պայմանավորված է, որ «հարկային պարտքեր» արտահայտությունը նշանակում է հարկի ցանկացած գումար, ինչպես նաև նրա տոկոսները, նրա հետ կապված տուգանքները կամ տույժերը և այդ գանձմանը բնորոշ ծախսերը, որոնք ենթակա են վճարման, բայց դեռևս չեն վճարվել:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են միայն այն հարկային պարտքերի նկատմամբ, որոնք ներկայացված են Հայցատեր պետությունում դրանց գանձումը թույլատրող փաստաթղթի միջոցով և, եթե իրավասու մարմինները չեն համաձայնել այլ կերպ, չեն վիճարկվել:

3. Մահացած անձին կամ նրա ժառանգությանը վերաբերող հարկային պարտքերի գանձման համար աջակցության պարտավորությունը սահմանափակվում է դրա ժառանգության կամ յուրաքանչյուր փաստացի սեփականատիրոջ ստացած գույքի արժեքի չափով՝ համաձայն այն բանի, թե պարտքը պետք է գանձվի այն ժառանգությունից կամ փաստացի սեփականատերերից:

4. Հայցատեր պետության իրավասու մարմնի պահանջով Հայցվող պետության իրավասու մարմինը կոնսերվացման միջոցներ է ձեռնարկում հարկի գումարի գանձման մտադրությամբ, եթե անգամ պարտքը բողոքարկվել է կամ գանձումը թույլատրող փաստաթուղթը դեռ չի կազմվել:

5. Վարչական օգնության պահանջը ուղեկցվում է.

ա) հարկային պարտքի բնույթը հաստատող հայտարարագրով, և, գանձման առնչությամբ, 2-րդ կետի պայմանների բավարարության ապացույցով,

բ) Հայցատեր պետությունում գանձումը թույլատրող փաստաթղթի պաշտոնական պատճենով,

գ) գանձման կամ պահպանման միջոցներ ձեռք առնելու համար պահանջվող ցանկացած այլ փաստաթղթով:

6. Հայցատեր պետությունում գանձումը թույլատրող փաստաթուղթը, անհրաժեշտության դեպքում և Հայցվող պետությունում ուժի մեջ մտած դրույթներին համապատասխան, ընդունվում, ճանաչվում, լրացվում կամ փոխարինվում է Հայցվող պետությունում գանձումը թույլատրող փաստաթղթով՝ աջակցության խնդրանքը ստանալու ժամկետից ամենակարճ ժամանակահատվածում:

7. Այն հայցերը, որոնք վերաբերում են ժամկետին, որից հետո հարկային պարտքը հնարավոր չէ պահանջել, լուծվում են Հայցատեր պետության ներքին օրենսդրությամբ: Աջակցության հայցը պետք է պարունակի այդ ժամկետին վերաբերող տեղեկություններ:

8. Աջակցության հայցի համաձայն Հայցվող պետության կողմից իրականացված գանձման գործողությունները, որոնք այդ Պետության ներքին օրենսդրության համաձայն ընդհատում կամ դադարեցնում են 7-րդ կետում նշված ժամկետը, կունենա նույն արդյունքը նաև Հայցատեր պետության ներքին օրենսդրության շրջանակներում: Հայցվող պետությունը այդ գործողությունները կատարելու մասին կտեղեկացնի Հայցատեր պետությանը:

9. Ամեն դեպքում Հայցվող պետությունը պարտավոր չէ ընթացք տալ աջակցության հայցին գանձումը թույլատրող սկզբնական փաստաթղթի ներկայացման ժամկետից 15 տարի հետո:

10. Հարկային պարտքը, որի գանձման համար աջակցություն է ցուցաբերվում, չի օգտվում Հայցվող պետությունում այդ Պետության հարկային պարտքերի համար նախատեսված որևէ հատուկ առավելություններից, եթե նույնիսկ կիրառվող գանձման ընթացակարգը իր սեփական հարկային պարտքերի նկատմամբ կիրառվող ընթացակարգն է:

11. Հայցվող պետությունը կարող է համաձայնել վճարման տարեկետման կամ աստիճանաբար վճարման հետ, եթե նրա ներքին օրենսդրությունը կամ վարչական գործավարությունը համանման պարագաներում դա թույլ է տալիս, նախապես տեղեկացնելով Հայցատեր պետությանը:

12. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

Հոդված 28

Գիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներ

1. Սույն Համաձայնագրի դրույթները ոչ մի ձևով չեն ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների անդամների, հյուպատոսական հաստատությունների անդամների և միջազգային կազմակերպությունների մշտական ներկայացուցչությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային առավելությունների վրա:

2. Չնայած 4-րդ հոդվածի դրույթներին՝ Պայմանավորվող պետության՝ մյուս Պայմանավորվող պետությունում կամ երրորդ պետությունում գտնվող դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հաստատության կամ մշտական ներկայացուցչության անդամ հանդիսացող ֆիզիկական անձը, Համաձայնագրի նպատակների համար դիտարկվում է որպես հավատարմագրված Պետության ռեզիդենտ, եթե նա նույն ձևով ենթակա է հարկման հավատարմագրող Պետությունում ամբողջ գույքի և եկամտի նկատմամբ, ինչպես որ այդ Պետության ռեզիդենտները:

3. Համաձայնագիրը չի կիրառվում միջազգային կազմակերպությունների, նրանց մարմինների կամ պաշտոնյաների նկատմամբ և երրորդ Պետության դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հաստատությունների կամ մշտական ներկայացուցչությունների անդամ հանդիսացող անձանց նկատմամբ, որոնք գտնվում են Պայմանավորվող պետությունում և Պայմանավորվող պետություններից մեկում նույնպես ենթակա չեն հարկման ամբողջ գույքի և եկամտի նկատմամբ, ինչպես որ այդ Պետության ռեզիդենտները:

Հոդված 29

Կիրառման ձևերը

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են միասին կամ առանձին սահմանել սույն Համաձայնագրի կիրառման ձևերը:

2. Մասնավորապես, Պայմանավորվող պետությունում 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված առավելությունները ձեռք բերելու նպատակով մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտները, եթե իրավասու մարմինները այլ ձև չեն սահմանի, պետք է ներկայացնեն իրենց ռեզիդենտությունը հաստատող ձևը, որը մասնավորապես ցույց կտա դիտարկվող եկամտի կամ գույքի բնույթը, ինչպես նաև գումարը կամ արժեքը, և ներառելով այդ մյուս Պետության հարկային ծառայությունների հավաստումը:

Հոդված 30

Ուժի մեջ մտնելը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կժանուցի մյուսին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ արարողակարգի ավարտման մասին: Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի ծանուցումներից վերջինի ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Համաձայնագրի դրույթները կիրառվում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող հարկման ենթակա եկամուտների նկատմամբ,

բ) աղբյուրի մոտ չգանձվող եկամուտների հարկերի առնչությամբ, հանգամանքերից կախված, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող ցանկացած օրացուցային տարվա կամ որևէ այլ հաշվետու ժամանակաշրջանի հետ կապված եկամուտների նկատմամբ,

գ) այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարում առաջացած հարկման ենթակա դեպքերի նկատմամբ:

Հոդված 31 Դադարեցում

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում առանց տևողության սահմանափակման: Սակայն Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է այն դադարեցնել սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հինգ տարվա ժամկետը լրանալուց հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն 6 ամիսը չգերազանցող ժամկետի ընթացքում դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցման միջոցով:

2. Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիրը փոխանցելու օրացուցային տարվան հաջորդող եկամուտների նկատմամբ,

բ) աղբյուրի մոտ չգանձվող եկամուտների հարկերի առնչությամբ, հանգամանքերից կախված, դադարեցման ծանուցագիրը փոխանցելու օրացուցային տարվան հաջորդող ցանկացած օրացուցային տարվա կամ որևէ այլ հաշվետու ժամանակաշրջանի հետ կապված եկամուտների նկատմամբ,

գ) այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիրը փոխանցելու օրացուցային տարվան հաջորդող տարում առաջացած հարկման ենթակա դեպքերի նկատմամբ:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լրագրված ներքոստորագրողները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարվել է Փարիզ քաղաքում 1997 թվականի դեկտեմբերի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, երկու տեքստերը լիովին հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001թ. մայիսի 1-ից :

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումը և խարդախությունը կանխելու մասին Համաձայնագրի ստորագրման պահին ներքոստորագրողները համաձայնության են եկել Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող հետևյալ դրույթների առնչությամբ.

1. 2-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի առնչությամբ. աշխատավարձի հարկը կիրառվում է Հայաստանի ռեզիդենտների նկատմամբ այն դեպքում, երբ այդ ռեզիդենտները ենթակա են հարկման Ֆրանսիայում՝ համաձայն սույն Համաձայնագրի 7-րդ և 14-րդ հոդվածների:

2. 3-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի առնչությամբ. «ընկերություն» տերմինը ներառում է ցանկացած ընկերակցություն կամ անձանց խումբ, որոնք ֆրանսիական օրենսդրության համաձայն ենթակա են այն ընկերակցության նկատմամբ կիրառվող նմանատիպ հարկային ռեժիմի, որի գործնական կառավարման վայրը գտնվում է Ֆրանսիայում:

3. 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի առնչությամբ, Պայմանավորվող պետության պահեստից ապրանքների և արտադրանքի «հանձնումը» կազմում է մշտական հաստատություն այդ Պետությունում, եթե այդ Պետության այդ պահեստից կիրականացվի պահպանման, ցուցադրման, փոխադրման կամ այլ նախապատրաստական կամ օժանդակ բնույթի գործունեությունից տարբեր գործունեությունը:

4. Պայմանավորված է, որ «անշարժ գույք» տերմինը 6-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանումների համաձայն ներառում է օպցիոնները (ընտրության հնարավորությունները), վաճառքի պարտավորությունները և համանման իրավունքները՝ կապված այդ գույքի հետ:

5. 12-րդ հոդվածի առնչությամբ. տեխնիկական ծառայությունների, ներառյալ գիտական, երկրաբանական կամ տեխնիկական բնույթի ուսումնասիրությունների կամ հետազոտումների, կամ ճարտարագիտական պայմանագրերի, կամ խորհրդատվական կամ հսկողական ծառայությունների առնչությամբ ստացած վճարումները չեն դիտարկվի որպես արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկությունների վճարումներ:

6. Սույն Համաձայնագրի դրույթները Ֆրանսիային ոչ մի դեպքում չեն արգելում կիրառել իր հարկային օրենսգրքի 212-րդ հոդվածի դրույթները կամ ցանկացած համանման դրույթ, որը կարող է ուղղել կամ փոխարինել այդ հոդվածի դրույթները:

Կատարվել է Փարիզ քաղաքում 1997 թվականի դեկտեմբերի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, երկու տեքստերը լիովին հավասարազոր են:



16/01167

Երևան, 3 փետրվարի 2004թ.

Հարգելի պարոն դեսպան,

Պատիվ ունեմ վկայակոչել Ձեր 2003 թվականի փետրվարի 5-ի թիվ 35/CD/AL հայտագիրը, որի բովանդակությունը հետևյալն է.

«Հարգելի պարոն Նախարար,

Հղում կատարելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 1997 թ. դեկտեմբերի 9-ին Փարիզում ստորագրված «Եկամտահարկի և գույքահարկի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային չվճարումներն ու խարդախությունը կանխելու մասին» համաձայնագրին՝ պատիվ ունեմ իմ կառավարության հանձնարարականով Ձեզ առաջարկելու կրկնակի հարկումների վերացման մասին 23-րդ հոդվածի 1 A) ս) կետը փոխարինել հետևյալ կետով:

ii) 7-րդ հոդվածում և 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ֆրանսիական ընդերքային հարկին ենթակա եկամտի առնչությամբ և 16-րդ հոդվածում 11-րդ հոդվածի 2-րդ կետում, 12-րդ հոդվածի 2-րդ կետում, 15-րդ հոդվածի 4-րդ կետում, 16-րդ հոդվածում և 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված հարկի առնչությամբ՝ Հայաստանում վճարված հարկի գումարին այդ հոդվածների դրույթներին համապատասխան, սակայն այդ հարկային հաշվանցումը չպետք է գերազանցի այդ եկամտին համապատասխանող ֆրանսիական հարկի գումարը:

1 C) ii) կետը փոխարինել հետևյալ կետով.

«ii) պայմանավորված է, որ «Հայաստանում վճարված հարկի գումար» արտահայտությունը «a» և «b» ենթակետերում օգտագործելիս նշանակում է հայկական հարկի գումար, գործնականորեն վճարված այնտեղ՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան, վերջնականորեն դիտարկվող եկամտի կամ գույքի առնչությամբ Ֆրանսիայի ռեզիդենտ հանդիսացող այդ նկատման կամ գույքի առնչության փոխարինող սեփականատիրոջ կողմից»:


Երախտապարտ կլինեմ Ձեզ Հայաստանի կառավարության կողմից առաջարկությունն ընդունվելու դեպքում ինձ իրազեկելու համար: Այդ դեպքում սույն հայտագիրը, ինչպես նաև Ձեր պատասխանը կնշանակեն այս կետի շուրջ երկու կառավարությունների համաձայնությունը: Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու համար, յուրաքանչյուր կողմ կհայտագրի մյուսին անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին: Վերջինս ուժի մեջ կմտնի վերջին հայտագրման ստացման օրվանից»:

Ընդունեք խնդրեմ, պարոն նախարար, հարգանքներիս գերազույն հավաստիքը:»

Պարոն Անրի Բյունի
Հայաստանում Ֆրանսիայի Դեսպան

Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնել, որ Ձեր հայտագրում նշված առաջարկությունն ընդունելի է Հայաստանի կառավարության համար: Ձեր հայտագիրը և սույն պատասխանը կկազմեն համաձայնագիր մեր երկու կառավարությունների միջև, որն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումներից վերջինի ստացման օրը:

Ընդունեք, խնդրեմ, պարոն դեսպան, իմ խորին հարգանքի հավաստիքը:



Վարդան Օսկանյան